**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**
**ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/45 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**14.07.2020թ.**

**ք. Երևան**

07.07.2020-14.07.2020թթ. ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ վագոնների պահեստամասերի և այլ հարակից պարագաների ձեռքբերման ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/45 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Վ. Մելյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «էլեկտրագնացքների շահագործման և նորոգման» մասնաճյուղի պետ, |
| Ս. Բադալյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «էլեկտրագնացքների շահագործման և նորոգման» մասնաճյուղի գլխավոր ինժեներ, |
| Ս. Եղիազարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «էլեկտրագնացքների շահագործման և նորոգման» մասնաճյուղի պետի տեղակալ վերանորոգման գծով, |
| Մ. Գևորգյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «էլեկտրագնացքների շահագործման և նորոգման» մասնաճյուղի գնացքների ավտոմատ կառավարման և ռադիոկապի սարքերի լաբորատորիայի պետ, |
| Ռ. Կոգանյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «էլեկտրագնացքների շահագործման և նորոգման» մասնաճյուղի ավագ ապրանքագետ-պահեստապետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Վ. Մելյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:

3. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:

4. Բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2020թ.-ի հուլիսի 7-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 10:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման հայտով սահմանված ընդհանուր գները:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Մեքենավարի լծակի ռեդուկտորի կիպարար № 038 (Ø 33 արտաքին) /Մերոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | 60000 |
| 2 | Էլեկտրական օդաճնշակ ЭК 4Б М /Մերոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | 36000000 |
| 3 | ЛК –ի խցօղակ /Մերոպոլիտենի 81-717/ 714 մոդելի վագոնների համար / | 240000 |
| 4 | Մեքենավարի լծակի դիաֆրագմա № 013 /Մերոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | 560000 |
| 5 | Ուժային դիոդ (PHT) /Մերոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / RM 400 HV 34 S | 216000 |
| 6 | Ուժային դիոդ (PHT) RM 400 HA 34 S /Մերոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | 226000 |
| 7 | Սեղմակոճակ KE 011-У 3 /Մերոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | 50000 |
| 8 | Անջատասարք СНЛ58-64/95 x 9Р-20-2-В /Մերոպոլիտենի 81-717 /714 մոդելի | 225000 |

| | | |
|---|---|---|
| | վագոնների համար / | |
| 9 | Ռելե РЭС -22 РФ 4500 131 /Մերոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | 200000 |
| 10 | Կոնդենսատոր 22 МКФ 50 В /Մերոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | 20000 |
| 11 | Ռելե Р-3100 2ТД.309.039-8/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | 116000 |
| 12 | Ռելե РЭВ-827 У3 6ТД.230.017/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | 77000 |
| 13 | Ռելե РЭВ-811 6ТД.230.017/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | 86000 |
| 14 | Ռելեի կոճ 5ТД-522.286-75В/РУТ/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | 84000 |
| 15 | Ռելեի կոճ 5ТД-522.298.1-75В/РУТ/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | 84000 |
| 16 | Ռելեի կոճ 5ТД-522.299-75В/РУТ//Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | 84000 |
| 17 | Ռելեի կոճ 5ТД-522.230.6-75В/РРТ//Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | 84000 |
| 18 | Ինդուկտիվ շունտ ИШ -15А У 2 2ТД.710.042/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | 2200000 |
| 19 | Հպարկիչ ПК -162 2ТД.420.004/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | 125000 |
| 20 | Բռունցքային էլեմենտ КЭ-46 6ТД.687.043/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | 76000 |
| 21 | Մետրոպոլիտենի գնացքի երթևեկության արագության չափման սարք ИДФС.016.00.000/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար/ | 1280000 |
| 22 | Լարման ձևափոխիչ БПФ 300/50-90 ДС Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | 4400000 |
| 23 | Մեքենավարի բազկաթոռ 801.222.000.000/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | 1200000 |
| 24 | Ապակեմաքրիչ/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | 144000 |
| 25 | Կանգնակ БАРС ИДФС.056.00.00/Մետրոպոլիտենի 81-717 | 1044000 |

| | | |
|---|---|---|
| | /714 մոդելի վագոնների համար / | |
| 26 | Կարդանային օղագոտու բռունցքային էլեմենտի 1.7020.31.53.056.10 կոմպլեկտավորողներ | 2484000 |
| 27 | Խոզանակակալ /Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար/ 5 ТД.112.040 | 360000 |
| 28 | Մեքենավարի ռեդուկտորի ցանցային զտիչ № 33 /Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | 224000 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտ կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ |
|---|---|---|
| 1 | «Ալեռտո» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 02686862, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նաիրի Զարյան 74Բ, Հեռ.՝ +37498282938, էլ. հասցե՝ info@alerto.am |
| 2 | ООО «ЭЛАР ГОЛД» | ՀՎՀՀ՝ 9718026114, գործունեության հասցե՝ 111622 г. Москва, ыл. Косинская Б., дом 27, строение 16, помещение 612, Հեռ.՝ +79606117771, էլ. հասցե՝ elargold@yandex.ru |
| 3 | «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏՍ» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 01297088, գործունեության հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Ջամբուլի փ. 33, Հեռ.՝ +37494171919, էլ. հասցե՝ unsllcompany@gmail.com |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅՏՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ հետևյալ մասնակիցների.

1. ООО «ЭЛАР ГОЛД» - Հավելված 1-ով ներկայացված շահառուների մասին տեղեկատվության մեջ նշված չէ անձը հաստատող փաստաթղթի տեսակը:

2. «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ - Հայտը ներկայացվել է հայերեն լեզվով, իսկ Հավելված 1.1-ով գնման առարկաների ամբողջական նկարագրերը ներկայացված են հայերենից բացի այլ լեզվով ևս:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Մեքենավարի լծակի ռեդուկտորի կիպարար № 038 (Ø 33 արտաքին) /Մերոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | - | 60000 | - | - | - |
| 2 | Էլեկտրական օդաճնշակ ЭК 4Б М /Մերոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | - | 36000000 | - | - | - |
| 3 | ЛК –ի խցօղակ /Մերոպոլիտենի 81-717/ 714 մոդելի վագոնների համար / | - | 240000 | - | - | - |
| 4 | Մեքենավարի լծակի դիաֆրագմա № 013 /Մերոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | - | 560000 | - | - | - |
| 5 | Ուժային դիոդ (PHT) /Մերոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / RM 400 HV 34 S | ООО «ЭЛАР ГОЛД» | 216000 | 204000 | 0 | 204000 |
| 6 | Ուժային դիոդ (PHT) RM 400 HA 34 S /Մերոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | ООО «ЭЛАР ГОЛД» | 226000 | 204000 | 0 | 204000 |
| 7 | Սեղմակոճակ KE 011-У 3 /Մերոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | - | 50000 | - | - | - |
| 8 | Անջատասարք СНЛ58-64/95 х 9Р-20-2-В /Մերոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | ООО «ЭЛАР ГОЛД» | 225000 | 150000 | 0 | 150000 |
| 9 | Ռելե РЭС -22 РФ 4500 131 /Մերոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | - | 200000 | - | - | - |
| 10 | Կոնդենսատոր 22 МКФ 50 В /Մերոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | - | 20000 | - | - | - |
| 11 | Ռելե Р-3100 2ТД.309.039-8/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | ООО «ЭЛАР ГОЛД» | 116000 | 80000 | 0 | 80000 |
| 12 | Ռելե РЭВ-827 УЗ 6ТД.230.017/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | ООО «ЭЛАР ГОЛД» | 77000 | 48000 | 0 | 48000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 13 | Ռելե РЭВ-811 6ТД.230.017/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | ООО «ЭЛАР ГОЛД» | 86000 | 40000 | 0 | 40000 |
| 14 | Ռելեի կոճ 5ТД-522.286-75В/РУТ/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | ООО «ЭЛАР ГОЛД» | 84000 | 44000 | 0 | 44000 |
| 15 | Ռելեի կոճ 5ТД-522.298.1-75В/РУТ/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | ООО «ЭЛАР ГОЛД» | 84000 | 44000 | 0 | 44000 |
| 16 | Ռելեի կոճ 5ТД-522.299-75В/РУТ//Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | ООО «ЭЛАР ГОЛД» | 84000 | 44000 | 0 | 44000 |
| 17 | Ռելեի կոճ 5ТД-522.230.6-75В/РРТ//Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | ООО «ЭЛАР ГОЛД» | 84000 | 50000 | 0 | 50000 |
| 18 | Ինդուկտիվ շունտ ИШ -15А У 2 2ТД.710.042/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ | 2200000 | 1650000 | 330000 | 1980000 |
| 19 | Հպարկիչ ПК -162 2ТД.420.004/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | - | 125000 | - | - | - |
| 20 | Բռունցքային էլեմենտ КЭ-46 6ТД.687.043/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | ООО «ЭЛАР ГОЛД» | 76000 | 64000 | 0 | 64000 |
| 21 | Մետրոպոլիտենի գնացքի երթևեկության արագության չափման սարք ИДФС.016.00.000/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար/ | - | 1280000 | - | - | - |
| 22 | Լարման ձևափոխիչ БПФ 300/50-90 ДС Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | ООО «ЭЛАР ГОЛД» | 4400000 | 3400000 | 0 | 3400000 |
| | | «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ | 4400000 | 3620000 | 724000 | 4344000 |
| 23 | Մեքենավարի բազկաթոռ 801.222.000.000/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | ООО «ЭЛАР ГОЛД» | 1200000 | 880000 | 0 | 880000 |
| 24 | Ապակեմաքրիչ/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | - | 144000 | - | - | - |
| 25 | Կանգնակ БАРС ИДФС.056.00.00/Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | ООО «ЭЛАР ГОЛД» | 1044000 | 820000 | 0 | 820000 |
| | | «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ | 1044000 | 1300000 | 260000 | 1560000 |
| 26 | Կարդանային օղագոտու բռունցքային էլեմենտի 1.7020.31.53.056.10 կոմպլեկտավորողներ | «Ալեռտո» ՍՊԸ | 2484000 | 1890000 | 378000 | 2268000 |
| | | ООО «ЭЛАР ГОЛД» | 2484000 | 1620000 | 0 | 1620000 |
| 27 | Խոզանակակալ /Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար/ 5 ТД.112.040 | - | 360000 | - | - | - |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 28 | Մեքենավարի ռեդուկտորի ցանցային զտիչ № 33 /Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / | - | 224000 | - | - | - |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը,
2. 1-4-րդ, 7-րդ, 9-րդ, 10-րդ, 19-րդ, 21-րդ, 24-րդ, 27-րդ, 28-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները:
3. նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել ООО «ЭЛАР ГОЛД»-ին և «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Հավելված 1-ում և Հավելված 1.1-ում արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. ООО «ЭЛАР ГОЛД»-ի և «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:
2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 26 | «Ալեռտո» ՍՊԸ | բավարար |
| 5, 6, 8, 11-17, 20, 22, 23, 25, 26 | ООО «ЭЛАР ГОЛД» | բավարար |
| 18, 22, 25 | «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ | բավարար |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

ՀՀ դրամ

| Չափ | Մասնակցի | Ընտրված | Մասնակցի |
|---|---|---|---|

| աբաժնի N | Զբաղեցրած տեղ | Անվանում | մասնակցի դեպքում նշվում է "X" | առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|
| 5 | 1 | ООО «ЭЛАР ГОЛД» | X | 204000 |
| 6 | 1 | ООО «ЭЛАР ГОЛД» | X | 204000 |
| 8 | 1 | ООО «ЭЛАР ГОЛД» | X | 150000 |
| 11 | 1 | ООО «ЭЛАР ГОЛД» | X | 80000 |
| 12 | 1 | ООО «ЭЛАР ГОЛД» | X | 48000 |
| 13 | 1 | ООО «ЭЛАР ГОЛД» | X | 40000 |
| 14 | 1 | ООО «ЭЛАР ГОЛД» | X | 44000 |
| 15 | 1 | ООО «ЭЛАР ГОЛД» | X | 44000 |
| 16 | 1 | ООО «ЭЛАР ГОЛД» | X | 44000 |
| 17 | 1 | ООО «ЭЛАР ГОЛД» | X | 50000 |
| 18 | 1 | «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ | X | 1650000 |
| 20 | 1 | ООО «ЭЛАР ГОЛД» | X | 64000 |
| 22 | 1 | ООО «ЭЛАР ГОЛД» | X | 3400000 |
| | 2 | «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ | | 3620000 |
| 23 | 1 | ООО «ЭЛАР ГОЛД» | X | 880000 |
| 25 | 1 | ООО «ЭЛАР ГОЛД» | X | 820000 |
| | 2 | «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ | | 1300000 |
| 26 | 2 | «Ալեռտո» ՍՊԸ | | 1890000 |
| | 1 | ООО «ЭЛАР ГОЛД» | X | 1620000 |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը: Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագրերի նախագծերը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկները և պայմանագրերի նախագծերը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջիններիս կողմից պայմանագրերը չստորագրելու և պայմանագրերի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի՝** | | |
| **Նախագահ** | | Վ. Մելյան |
| **Անդամներ** | | Ս. Բադալյան |
| | | Ս. Եղիազարյան |
| | | Մ. Գևորգյան |
| | | Ռ. Կոզանյան |
| **Քարտուղար** | | Մ. Ղազարյան |